

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ В ВЫСШЕЙ ШКОЛЕ
FOREIGN LANGUAGES IN HIGHER EDUCATION

Գիտական հանդես
Научный журнал
Scientific Journal



2 (25)

Երևան – 2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Вестник издается по решению Ученого совета ЕГУ
The Bulletin is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆ. Երզնկյան Ե. Լ.

Խմբագրական խորհուրդ.

բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գասպարյան Ս. Ք., բ.գ.դ., պրոֆ. Գաբրիելյան Յու.Ս., բ.գ.դ., պրոֆ. Մակարյան Ա.Ա., բ.գ.դ., պրոֆ. Պարոնյան Շ.Հ., բ.գ.դ., պրոֆ. Մինոնյան Ա. Ա., բ.գ.դ., պրոֆ. Առաքելյան Ա. Հ., բ.գ.թ., դոց. Բաղդասարյան Հ. Գ., մ.գ.թ., դոց. Հարությունյան Զ.Հ., դոց. Թովմասյան Ն.Ս. (պատասխանատու քարտուղար):

Главный редактор: д.ф.н., проф. Ерзинкян Е. Л.

Редакционная коллегия:

д.ф.н., проф., член-корр. НАН РА Гаспарян С.К., д.ф.н., проф. Габриелян Ю.М., д.ф.н., проф. Макарян А.А., д.ф.н., проф. Паронян Ш.А., д.ф.н., проф. Симонян А.А., д.ф.н., проф. Аракелян А.Г., к.ф.н., доц. Багдасарян А.Г., к.п.н., доц. Арутюнян З.Г., доц. Товмасын Н.М. (ответ. секретарь).

Editor-in-Chief: Doctor in Philology, Prof. Yerznkyan Y. L.

Editorial Board:

Doctor in Philology, Prof., Corresponding member of RA NAS Gasparyan S.K., Doctor in Philology, Prof. Gabrielyan Y.M., Doctor in Philology, Prof. Makaryan A.A., Doctor in Philology, Prof. Paronyan Sh.H., Doctor in Philology, Prof. Simonyan A.A., Doctor in Philology, Prof. Arakelyan A.H., PhD, Associate Prof. Baghdasaryan H.G., PhD, Associate Prof. Harutyunyan Z.H., Associate Prof. Tovmasyan N.M. (Executive Secretary).

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսն ընդգրկված է դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ցանկում:

Научный журнал «Иностранные языки в высшей школе» включен в список периодических изданий, допущенных Высшей аттестационной комиссией РА для публикации результатов докторских и кандидатских диссертационных работ.

Scientific journal "Foreign Languages in Higher Education" is included in the list of journals approved by RA Supreme Certifying Commission to publish the main findings of doctoral and PhD dissertations.

Ռուզաննա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԷՌՆԵՍՏՈ ՍԱՔԱՏՈՅԻ «ԹՈՒՆԵԼԸ» ՎԵՊԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԱՏԻՆԱՄԵՐԻԿՅԱՆ
ԷՔՁԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում դիտարկվում են Էռնեստո Սաբատոյի «Թունելը» վեպի առանձնահատկությունները լատինամերիկյան էքզիստենցիալիզմի շրջանակներում: Էռնեստո Սաբատոն արգենտինացի գրող է, նկարիչ և ֆիզիկոս: Էռնեստո Սաբատոն նվաճել է իսպանալեզու գրականության ամենաբարձր մրցանակներից մի քանիսը և մեծ հեղինակություն վայելել Լատինական Ամերիկայի գրական աշխարհում: Սաբատոյի ստեղծագործական գործունեությունը ներառում է երեք վեպ՝ «Թունելը», «Հերոսների և շիրիմների մասին» (1961) և «Բնաջնջողը» (1974): «Թունելը» հոգեբանական վեպ է նկարիչ Խուան Պաբլո Կաստելի և կնոջ նկատմամբ նրա ունեցած մտասևեռվածության մասին: Ստեղծագործության վերնագիրը խորհրդանշում է Կաստելի հուզական և ֆիզիկական մեկուսացումը հասարակությունից, որն առավել ակնհայտ է դառնում, երբ Կաստելը շարունակում է բանտախցից պատմել որոշ դեպքերի մասին, որոնք ստիպում են վերջինիս սպանել այն միակ մարդուն, որն ունակ էր հասկանալու իրեն:

Բանալի բառեր. էքզիստենցիալիզմ, իսպանալեզու գրականություն, հեղինակավոր մրցանակ, ստեղծագործական գործունեություն, հոգեբանական վեպ, մտասևեռվածություն, խորհրդանշել, հուզական և ֆիզիկական մեկուսացում

«... այնուամենայնիվ, գոյություն ուներ
միայն մեկ թունել՝
մուտք և միայնակ. այն, որ իմն էր»:
Էռնեստո Սաբատո

Արգենտինացի վիպասան և էսսեիստ Էռնեստո Սաբատոն լատինամերիկյան գրականության տիտաններից է: Սաբատոյին՝ որպես էքզիստենցիալիստ գրողի, գրական առաջին լուրջ հաջողություն է բերել 1945 թվականին լույս տեսած «Ինչ-որ մեկը և տիեզերքը» էսսեն, որտեղ Սաբատոն արժարժում է փիլիսոփայական և սոցիալական թեմաներ, ինչպես նաև գիտության հանդեպ ունեցած էքզիստենցիալիստների այն թերահավատությունը, թե գիտությունը չի կարող մխիթարություն դառնալ կասկածով և դառնությամբ լցված մարդու հուսահատության համար:

Սաբատոյի «Թունելը» վեպի մասին խոսելիս նախ և առաջ պետք է անդրադառնալ XX դարի «լատինամերիկյան բումին», որը մեծ ազդեցու-

թյուն է թողել իսպանախոս գրողների՝ Կորտասարի, Բորխեսի, Կասարեսի, Սաբատոյի և այլ գրողների գրելաոճի վրա:

«Լատինամերիկյան բումը» սկսվում է 1960-ականների կեսերին շնորհիվ մի քանի կարևոր ստեղծագործությունների, որոնք լույս են տեսնում Լատինական Ամերիկայի որոշ երկրներում՝ համայն աշխարհի ուշադրությունը հրավիրելով իսպանալեզու գրականության վրա, քանի որ սա պատումի մի նոր, դեռևս չտեսնված մի ձև էր, որը հստակ պատկերում էր այդ երկրների սոցիալական իրականությունը: Կային նաև այլ նորամուծություններ, որոնք իր հետ բերեց «լատինամերիկյան բումը»՝ իրականության և ֆանտաստիկայի միախառնում, պատումի և լեզվի նորացում, քաղաքային և գյուղական թեմաների ընդարձակում, քանի որ գերիշխող էր կարծիքը, թե հենց մեծ քաղաքները կամ մեգապոլիսներն էին, որ կարող էին առաջադրել սոցիալական իրականության փաստեր: Այդպիսով՝ Բուենոս Այրեսը դարձավ Լատինական Ամերիկայի «լատինամերիկյան բումի» կենտրոնը:

«Իսկական արվեստի գործ ստեղծելու համար գրողը պետք է խորամուխ լինի այն խնդիրների մեջ, որոնք առաջադրում են տվյալ հասարակությունը և ժամանակաշրջանը», - գրում է Էռնեստո Սաբատոն /Kovadloff, 2001: 55/:

Գրողը խորասուզվում է դրամատիկ երկու հիմնախնդիրների մեջ. մի կողմից՝ արևմտյան քաղաքակրթության ճգնաժամը, մյուս կողմից՝ գրողի անձնական ողբերգությունը. «Այն, որ աշխարհը սարսափելի է, հավերժական ճշմարտություն է և ապացույցի կարիք չունի, բավական է հիշատակել այն դեպքը, երբ համակենտրոնացման ճամբարներից մեկում, երբ նախկին դաշնակառավարը սկսում է գանգատվել քաղցից, նրան ստիպում են առնետ ուտել, այն էլ՝ կենդանի» /Սաբատո, 2014: 9/:

Սաբատոյի էքզիստենցիալիստական, հոռետեսական հայացքների լավագույն արտահայտությունն է դառնում «Թունելը» վեպը, որտեղ գրողը պատմում է սիրո և մահվան մասին չափազանց տխուր մի պատմություն, նկարագրում ժամանակակից անհատի մեծությունը՝ վերահաստատելով իր այն համոզմունքը, որ գիտությունը չի կարող պատասխանել էքզիստենցիալիզմի առաջադրած հարցադրումներին և խնդիրներին:

Ինչպես նշում է հեղինակը, «Թունելը» մութ հոգու պատմություն է, որը լույս է փնտրում մոայլ թունելի՝ փակուղու վերջում: Գլխավոր հերոսը Խուան Պաբլո Կաստելն է, որի կյանքը դժբախտության համայնապատկեր է, որտեղ նկարագրվում է մարդը՝ իր ժամանակի հոգեվարքի մեջ, մարդը, որը տառապում է զգացմունքի և բանականության մշտական հակադրությունից: Կարճ ասած՝ «Թունելը» հոռետեսական վեպ է, որտեղ հեղինակը վեր է հանում մարդու անկարողությունը՝ կառավարելու իրեն շրջապատող աշխարհը:

Սաբատոն գրում է մարդկային ապրումների, զգացմունքների և զգացողությունների ամենամուգ, մռայլ կողմերի մասին՝ մենություն, հիասթափություն, հուսահատություն, անձկություն, որոնք առավել քան հատուկ են էքզիստենցիալիստ գրողներին: Այս մասին Սաբատոն գրում է. «Վեպում ես ընտրել եմ հոգեբանության թեման այն պատճառով, որ այն անձի կարևոր մասն է կազմում: Վեպի հերոսը դրամատիկ, փոփոխական խառվածքի տեր մարդ է, որն իր մեջ կրում է տվյալ ժամանակաշրջանի և տվյալ հասարակության խնդիրները: Մի կողմից Կաստելին ապրում է այն ճգնաժամը, ինչի մեջ գտնվում է արևմտյան քաղաքակրթությունը, մյուս կողմից՝ անձնական ողբերգություն է ապրում, որովհետև չի կարողանում ապրել բռնությամբ և խաբեությամբ լի միջավայրում» /Sarmiento, 1997: 19-20/:

Խուան Պարլո Կաստելը վեպի գլխավոր հերոսն է և պատումը վարողը: Ինքնամիտի և միայնակ, բոլոր կողմից չհասկացված 38-ամյա նկարիչ, որը հույս ունի սիրելի կնոջ մեջ գտնել հասկացված և սիրված լինելու իր երազանքն ու անհրաժեշտությունը, քանի որ Մարիան միակ էակն է աշխարհում, որն ունակ է հասկանալու և ընկալելու պատկերասրահում ցուցադրվող իր կտավը. «Բայց եղավ մեկը, ով հասկացավ ինձ. նա, որին ես սպանեցի» /Սաբատո, 2014: 14/: Իսկապես, Մարիան միակն է, ով կարողանում է հասկանալ, ըմբռնել այն խորհրդավոր ուղերձը, որն ամփոփում է Կաստելի խորհրդանշական կտավը: Կտավի աջ անկյունում պատկերված փոքրիկ պատուհանն այն հույսն է, որին հավատում է նկարիչը, որի կարիքը զգում է. չէ՞ որ այն իր սեփական փրկության միակ հույսն է. «Նկարի վերևի ձախ կողմում կարելի էր տեսնել հեռավոր և փոքրիկ մի տեսարան. ամայի լողափ և ծովին նայող մի կին. կինը հավանաբար սպասում էր աներևույթ և հենց նոր հեռացած մի սովերի. ըստ իս՝ անհանգիստ և անվերջանալի մենության մի տեսարան էր: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նկարի այդ մասին. միայն թռուցիկ մի հայացք, ինչպես կնայեին արհեստական որևէ բանի՝ բացառությամբ մի հոգու. միայն այդ անձանոթ աղջիկը հասկացավ, որ դրա մեջ էր թաքնված ամենակարևորը: Ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողության օրն էր. անձանոթ մի աղջիկ երկար ժամանակ նայում էր նկարին՝ չնկատելով առաջամասում պատկերված և երեխայի խաղին հետևող մարմնեղ կնոջը, փոխարենը՝ սևեռուն հայացքով նայում էր նկարի վերևի ձախ մասին, և այդ ընթացքում նրան հետևելով՝ հասկացա, որ նա անջատվել էր ամբողջ աշխարհից. ո՛չ լսում, ո՛չ էլ տեսնում էր կտավի կողքով անցնող կամ կանգնող մարդկանց» /Սաբատո, 2014: 17/:

Հոգեբանական տեսանկյունից Կաստելը չափազանց խնդրահարույց, բարդ անձնավորություն է, երբեմն խելագարության հասնող և խելագարության հասցնող մի կերպար, որն ընթերցողին հարցադրումներ է անում գոյի մասին, չնայած Սաբատոյին լիովին էքզիստենցիալիստ համարել այնքան էլ ճիշտ չէ. «Հազարավոր տարիներ դատարկության

մեջ պատվող փոքրիկ երկրագնդի վրա լույս աշխարհ ենք գալիս տանջանքով, մեծանում ենք, պայքարում, հիվանդանում, տառապում, ստիպում տառապել մյուսներին, բղավում ենք, մեռնում, և միևնույն ժամանակ աշխարհ են գալիս նոր մարդիկ, որպեսզի կրկնեն այդ անիմաստ կատակերգությունը: Ես սկսեցի մտածել իմ ասած անիմաստ կատակերգության մասին. արդյոք մեր ամբողջ կյանքը լոկ հուսահատության անանուն ճիչերի շարք չէ՞ անտարբեր աստղերի անապատում: Արդյոք ինձ հաջողվե՞ց արտահայտել ամենակարևորը» /Սաբատո, 2014: 63/:

Վեպում հստակ երևում է, թե ինչպես է փոփոխվում կերպարի վարքագիծը: Սկզբում խոսքը մի նկարչի մասին է, որը խելագարության է հասնում հաղորդակցվել չկարողանալու անկարողությունից, նույնիսկ այն կնոջ հետ, ով կարողացել է հասկանալ իրեն. «Ես միշտ հակակրանք և նույնիսկ զզվանք եմ տածել մարդկանց և հատկապես մարդկային խմբավորումների նկատմամբ. ինչպե՞ս էի ատում ամառային լողափները, կային շրջապատից մեկուսացած որոշ տղամարդիկ և կանայք, որոնք հաճելի էին ինձ, ոմանք հիացրել են ինձ (ես նախանձ չեմ), ոմանց անկեղծ սիրել եմ, երեխաներն իմ մեջ քնքշություն և կարեկցանք էին արթնացնում (հատկապես, երբ գիտակցաբար ինքս ինձ ստիպում էի մոռանալ, որ տարիներ հետո նրանք նույնպես պիտի դառնային այն մեծերի նման, որոնց չեմ սիրում), այնուամենայնիվ, մարդիկ, որպես այդպիսին, միշտ էլ զզվելի են եղել ինձ համար: Չեմ թաքցնի, երբեմն մի ամբողջ օր չեմ կարողանում ուտել կամ մի ամբողջ շաբաթ ի վիճակի չեմ լինում աշխատել հենց մարդկային կեղծիքի պատճառով. պարզապես անհավատալի է, թե որքան ազահություն, նախանձ, անպատկառություն, կոպտություն և ժլատություն կարող է լինել մարդու մեջ, որոնք կարող են արտացոլվել նրա դեմքին, քայլվածքում, հայացքում, և ուրեմն զարմանալի ոչինչ չկա, որ նրանց տեսնելուց հետո չեմ կարողանում ո՛չ ուտել, ո՛չ գրել, ոչ էլ նույնիսկ ապրել, չնայած պետք է խոստովանեմ, որ ամենևին չեմ հպարտանում բնավորությանս այդ գծով, այս ամենը խոսում է նաև իմ մեջ ապրող մեծամտության, ազահության, ժլատության և կոպտության մասին, սակայն խոստացել եմ, որ ոչինչ չեմ թաքցնելու և պահում եմ խոստումս» /Սաբատո, 2014: 71/:

Վեպում կերպարի բնավորությունն է՛լ ավելի անտանելի է դառնում, երբ վերջինիս մեջ արթնանում է խանդը, որը դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական հայեցակետում. «Քաղաքից հեռանալու անսպասելի լուրն իմ մեջ կասկած առաջացրեց, ինչպես միշտ, սկսեցի հիշել ինձ թեական թվացող մանրամասներ, որոնց նախկինում ուշադրություն չէի դարձրել: Այն օրը հեռախոսով նրա ծայնը մի տեսակ ուրիշ էր. ո՞վքեր էին այն մարդիկ, որ ներսուդուրս անելով՝ խանգարում էին նրան խոսել ինձ հետ, որն էլ իր հերթին ապացուցում էր, որ Մարիան ընդունակ էր ձևացնելու: Ինչու սպասուհին մի պահ վարանեց, երբ խնդրեցի հեռախոսը փոխանցել Իրիբարներին: Իմ մեջ հատկապես տպա-

վորվել էր այն, երբ ասաց. «Եթե ես փակում եմ դուռը, նշանակում է՝ ինձ չպետք է անհանգստացնեն»: Սկսեցի մտածել, որ Մարիան գաղտնիքներ ուներ» /Սաբատո, 2014: 75-76/:

Կերպարի վարքագծի և խառնվածքի փոփոխությունը հեղինակը բացատրում է հետևյալ կերպ. «Մարդկային էակները երբեք չեն կարող մետաֆիզիկական վիճակները ներկայացնել մաքուր գաղափարների տեսքով՝ այլ միայն մարմնավորելով դրանց, այդպիսով՝ մետաֆիզիկական գաղափարները վերածվում են հոգեբանական խնդիրների, մետաֆիզիկական մենությունը վերածվում է որևէ քաղաքում ապրող որևէ մարդու մեկուսացման, մետաֆիզիկական հուսահատությունը վերածվում է խանդի, իսկ վեպը կամ պատմվածքը, որն ուղղորդված է լուսաբանելու այդ խնդիրը, ի վերջո վերածվում է կրքի կամ հանցանքի մասին վեպի կամ պատմվածքի» /Sarmiento, 1997: 31/: Եվ ուրեմն՝ կարելի է ասել, որ Կասստելի մենությունը վերածվեց մեկուսացման, իսկ հուսահատությունը խանդ ծնեց. ահա թե ինչի մասին է վեպը: «Երբեք չեմ մոռանա արվեստանոցում միասին անցկացրած ակնթարթները, հատկապես Մարիայի անհասկանալի վարքը, որն ինձ ստիպում էր տանջվել մաքուր սիրո և սարսափելի ատելության անորոշության մեջ: Մի անգամ հանկարծակի մեջս կասկած ծագեց, որ այդ ամենը կեղծ էր, որովհետև երբեմն Մարիան իրեն ամաչկոտ դեռահասի պես էր պահում, երբեմն՝ հիասքանչ կնոջ. ահա հենց այդպիսի պահերին կասկածների մի իսկական տարափ թափվում էր գլխիս. ո՞վ, որտե՞ղ, ինչու՞, ե՞րբ: Այդպիսի պահերին մտածում էի, որ Մարիան իր հերթական խորամանկ և անգութ կատակերգություններից էր խաղում, իսկ ես նրա համար ընդամենը հիմար երեխա էի, որին խաբում են հորինված պատմություններով, որպեսզի նա ինչ-որ բան ուտի կամ քնի: Երբեմն սարսափելի ամաչում էի իմ այդ վիճակից. արագ հագնվում էի և դուրս վազում փողոց՝ օդ շնչելու կամ կասկածներս ցրելու համար, երբեմն՝ հակառակը, հարձակվում էի նրա վրա, ցավեցնելու աստիճան սեղմում ձեռքերը և ի նշան սիրո՝ ստիպում աչքերիս նայել: Եթե մի օր իմանամ, որ երբևէ խաբել ես ինձ, շան պես կսատկացնեմ,- ասում էի Մարիային՝ կատաղության նուպաներին» /Սաբատո, 2014: 106-107/:

«Թունելում» Կասստելի գիտակցության միջոցով Սաբատոն ապացուցում է, որ հույսը որպես այդպիսին, գոյություն չունի, և որ մարդկային գիտակցությունը երբեք չի կարող հասնել անվերապահ կամ բացարձակ սիրո. «Քանի՛- քանի՛ անգամ եմ անիծել ինքս ինձ, երբեմն իմ մյուս ես-ը կոչ էր անում արարել բարին, մինչդեռ մյուսը խեղդվում էր ստի, կեղծիքի և ցուցադրական բարեկրթության մեջ: Երբ իմ մի ես-ը վիրավորում էր որևէ մեկին, մյուսը խղճում էր նրան և մեղադրում ինձ իմ գործած մեղքերի համար, ևս մի բան, որ տանել չեմ կարողանում մահկանացուներիս մեջ, այն է՝ երբ մի կեսդ ձգտում է ցույց տալ քեզ աշխարհի գեղեց-

կությունը, մյուսն ի ցույց է դնում դրա տծնությունը և համոզում, որ լիարժեք երջանկություն գոյություն չունի» /Սաբատո, 2014: 129/:

Որպեսզի ողբերգությունն է՛լ առավել դրամատիկ և ազդեցիկ լինի, հեղինակը պատմությունը ներկայացնում է առաջին դեմքով: Վեպի գլխավոր հերոսը՝ Կաստելը, պատմում է իր կյանքի պատմությունը բանտից, իրեն հասկացող միակ կնոջը սպանելուց հետո. «Բավական է ասել, որ ես Խուան Պարլո Կաստելն եմ, այն նկարիչը, որ սպանեց Մարիա Իրիբարնեին... Միայն մի մարդ կար, որ հասկանում էր իմ նկարները, որոնք ժամանակի ընթացքում կապացուցեն, թե որքան իմաստազուրկ են եղել բոլորի տեսակետները, իսկ իմ դժոխքի պատերն օր օրի ավելի անթափանց կդառնան բոլորի համար» /Սաբատո, 2014: 234/:

Վեպի կառուցվածքը պարզ է. Կաստելի պատումի շնորհիվ ընթերցողը կարող է հասկանալ, որ հերոսը մոլորվել է հուսահատության, հիասթափության լաբիրինթոսում. «Մինչև Մարիայի նամակը ստանալը ես նման էի աննպատակ թափառաշրջիկի, չգիտեի՝ ուր գնալ, շատ մեծ դժվարությամբ էի կարողանում նշմարել մարդկանց և առարկաների ուրվագծերը, անդունդների և փորձանքների աղոտ ուրվագծերը, սակայն Մարիայի նամակը ստանալուց հետո ամեն ինչ կարծես լուսավորվեց նոր դուրս եկած արևի շողով, արև, որը, սակայն, սև էր, գիշերային, չգիտեմ էլ նույնիսկ՝ արդյոք կարելի՞ է նման ձևով արտահայտվել. չէ՞ որ ես գրող չեմ, և նույնիսկ վստահ էլ չեմ՝ արդյոք ճի՞շտ է բնորոշումը, բայց չեմ պատրաստվում հրաժարվել արևի՝ «գիշերային» մակդիրի գործածությունից, քանի որ հենց այս բառն է, որ ոչ կատարյալ մեր լեզվում ճշգրիտ համապատասխանում է Մարիային» /Սաբատո, 2014: 93-94/:

Կաստելն ամբողջ դրամատիզմով կարողանում է ցույց տալ, որ իսկապես տառապում է, առանց Կաստելի պատմելու, ընթերցողը չի հասկանա ո՛չ նրա զգացմունքների խորությունը, ո՛չ մտքի ողբերգականությունը. «Ներքևում հոսող պղտոր ջուրը շարունակ գայթակղում էր ինձ. տառապե՛լ, ինչու՞, ինքնասպանությունը գայթակղում է նրանով, որ հեշտ է իրագործելը. ընդամենը մեկ ակնթարթ, և անհետա՞թ թվացող տիեզերքը հսկա գնդի նման գրողի ծոցը կգնա, իսկ երկնաքերերի, զրահապատ մեքենաների և կալանավայրերի թվացյալ ամրությունը լոկ հերյուրանք կթվա, ոչ ավելին: Կյանքը նման է տևական մղձավանջի, որից միայն մահը կարող է ազատել կամ արթնացնել մարդուն. արթնացու՞մ, բայց ինչի՞ց: Դեպի բացարձակ և հավերժական «ոչինչը» նետվելու սարսափը մշտապես ստիպել է ինձ հետ կանգնել ինքնասպան լինելու մտադրությունից: Մարդը, այնուամենայնիվ, այնքան է կապված կյանքին, որ ի վերջո, նախընտրում է համակերպվել նրա անկատարելության և փորձությունների հետ. դա է պատճառը, որ նա համարձակություն չի ունենում կամովի վերջ դնելու կյանքի ընթացքին: Պարզվում է նաև, որ, հասնելով ծայրահեղ հուսահատության, ինչպես սովորաբար պատահում է ինքնասպանությունից առաջ, մենք հասնում ենք այն կետին, երբ արդեն սպա-

ռել ենք մարդկային չարիքի ամբողջ պաշարը, և հասկանալով, որ անհնար է հաղթել չարին, մենք հանկարծ հասկանում ենք, որ ցանկացած աննշան բան հսկայական չափեր է ձեռք բերում, դառնում որոշիչ, և մենք ականա կառչում ենք դրանից, ինչպես որ անհուսորեն կկառչեինք ցանկացած խոտից՝ անդունդը գլորվելուց փրկվելու համար» /Սաբատո, 2014: 133-134/:

Կաստելի համար Բուենոս Այրեսը սառը և անհետաքրքիր քաղաք է: Լիովին մեկուսացված հերոսը փակվում է ինքն իր համար ստեղծած անվստահության, մենության և կատաղության «թունելի» մեջ: Կաստելի ճակատագիրը ֆիզիկական և հոգևոր բացարձակ մենությունն է, «թունելի» վերջում Կաստելի համար հույս չկա, որովհետև Կաստելը՝ հոգով և մտքով բանտարկված այդ մարդը, քաղաքին նայում է բանտի ճաղերի արանքից. «Այնուամենայնիվ, ես սպանեցի քեզ, ե՛ս, ե՛ս, որ քեզ նայում էի ապակե պատի միջով, ես, որ ի զորու չեղա դիպչելու քո լուռ և անձկալի դեմքին, ես՝ կույր տխմարս, անսիրտ եսասերս» /Սաբատո, 2014: 95/:

Կաստելի հավատալիքները և մտածմունքները վեր հանելու համար Սաբատոն օգտագործում է մենախոսության ձևը: «Թունելը» ամփոփում է այն համոզմունքը, որ գիտությունն ու արտադրողական պրոգրեսը վնասում են անհատին: Կաստելը, ի տարբերություն շատ այլ հերոսների, չի կարողանում խուսափել խելագարությունից, սովորաբար շատ ստեղծագործությունների հերոսներ հաջողությունների են հասնում կամ կարողանում են փոխել իրենք իրենց, սակայն Կաստելն էլ ավելի է խորասուզվում տառապանքի, խելագարության, կատաղության և սեփական մենության մեջ: Խուսան Պաբլո Կաստելը կարիքն ունի մեկի, որի հետ կարող է հաղորդակցվել, կիսել իր գաղափարները ու զգացմունքները. «Ինձ կենդանացնում է մարդկային այն աղոտ միտքը, որ երբևէ ես կհանդիպեմ այն մեկին, որը կհասկանա ինձ, թեկուզ մեկին» /Սաբատո, 2014: 111/:

Թունելը հանդես է գալիս որպես ժամանակակից աշխարհի խորհրդանիշ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե վերնագիրը կանխորոշում է պատմություն ինչ-որ սովորական թունելի մասին, սակայն այդ թունելը ինչ-որ կառույց չէ, այլ զգացմունքների, բանտարկության, հուսահատության և խելագարության թունել: Ինչու՞ «Թունել», որովհետև Կաստելի կյանքը թունելի պես մռայլ է և անհույս, որովհետև ժամանակակից թունելները հենց այդպիսին են՝ ամայի, խոնավ, սառը, որովհետև թունելներում միայն միայնակ հոգիներն ու թափառականներն են ապրում. «Թվում էր, թե երկուսս էլ ապրել էինք մեր կյանքը զուգահեռ միջանցքներում կամ թունելներում, ինչպես երկու հարազատ հոգիներ, որոնք քայլում են իրար կողքով, որոնց համար ժամանակը նույն կերպ է հոսում, որպեսզի հետո հանդիպեն միջանցքների վերջում՝ միայն Մարիայի համար պատկերած նկարի առջև՝ որպես կանխագուշացում այն բանի, որ ես արդեն այստեղ եմ, որ միջանցքները վերջապես խաչվել են, և որ հանդիպման ժամը մոտեցել է: Հանդիպման ժամը եկել էր, բայց արդյոք

խաչվե՛լ էին միջանցքները՝ միացնելով մեր հոգիները. ինչպիսի՛ մոլորություն, ո՛չ, առաջվա պես միջանցքները շարունակում էին զուգահեռ գնալ, չնայած մեզ բաժանող պատը հիմա դարձել էր բյուրեղյա, և ես կարող էի տեսնել լուռ և անառիկ Մարիային: Անգամ այդ պատը միշտ նույնը չէր, ժամանակ առ ժամանակ այն սևանում էր, և այդ ժամանակ ես չգիտեի, թե ինչ էր կատարվում մյուս կողմում, Մարիան ինչ էր անում, ինչ տարօրինակ բաներ էին նրա հետ կատարվում: Ինձ նույնիսկ թվում էր, թե նրա դեմքը ծիծաղում էր, ծիծաղում էր հեզանքով, հնարավոր է, որ նա ուրիշի հետ էր ծիծաղում, իսկ միջանցքների հետ կապված պատմությունը լրկ իմ երևակայության արդյունքն էր, այնուամենայնիվ, գոյություն ուներ միայն մեկ թունել՝ մութ և միայնակ, այն, որ իմն էր, որն ինձ տարավ իմ մանկություն, պատանեկություն, ապրած կյանքս: Եվ ահա ապակե պատի լուսապայծառ առավոտներից մեկի ժամանակ երևաց այդ աղջիկը, ես՝ միամիտս, հավատում էի, թե նա ուրիշ, հարևան թունելից էր եկել, չնայած, իրականում, նա պատկանում էր այն մեծ աշխարհին, որը չունի սահմաններ, այն, որ անհասանելի է թունելի բնակիչների համար, հնարավոր է, որ նա հետաքրքրությունից դրդված էր մոտեցել նկարին, նա, որ դարձել էր իմ անբուժելի մենության վկան, իսկ միգուցե նրան հետաքրքրել էր դեպի իմ արվեստ տանող տարօրինակ լեզուն» /Սաբատո, 2014: 223/:

Վեպի պատմությունը տխուր է և հուսահատեցնող. դժվար է պատկերացնել երջանիկ և լուսավոր թունել: Վեպի վերջում Կաստելը կրկին հայտնվում է թունելում, որն այս անգամ վերածվում է բանտի, որտեղ միայն մեկ փոքրիկ պատուհան կա, այստեղ Կաստելը լիակատար մենության մեջ է, իսկական սև ու մռայլ թունել, որտեղից իրեն այլևս չկա ազատում, չկա փախուստ իր մյուս ես-ից: Այլևս ոչինչ չի կարող փրկել Կաստելին, վերջում նրան մնում է միայն իր անփոփոխ հավատն այն բանի հանդեպ, որ ամբողջական և բացարձակ հաղորդակցություն՝ որպես այդպիսին, հնարավոր չէ, և որ չկան միմյանց զուգահեռ անցնող թունելներ, այլ որ ամեն դեպքում գոյություն ուներ միայն մեկ՝ մութ և միայնակ թունել, որ իրենն էր, որտեղ անցել էր իր մանկությունը, երիտասարդությունը, իր ամբողջ կյանքը. «Մինչ ես թափառում էի միջանցքում, ներքևում նա ապրում էր սովորական կյանքով, այն առօրյայով, որով ապրում են ներքևում ապրող մարդիկ՝ տարօրինակ, անհեթեթ կյանքով՝ դրա պարերով, տոնակատարություններով, ուրախությամբ և անհոգությամբ... Եվ այդ ժամանակ ես զգում էի, որ մենությունը, որին ես դատապարտված էի, ավելի սարսափելի էր, քան ես մտածում էի» /Սաբատո, 2014: 224-225/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարաոտտ Է. Թունելը, թարգմ. Ռուզաննա Պետրոսյանի, Երևան, Անտարես, 2014:
2. Kovadloff S. Ernesto Sábato. Una Pasión Invicta. Buenos Aires: Para La Nación, 2001.
3. Sarmiento C. Simbología en las Novelas de Ernesto Sábato. Ensayo, 1997.

Р. ПЕТРОСЯН – Особенности романа Эрнесто Сабато «Туннель» в контексте латиноамериканского экзистенциализма. – В статье представлены основные особенности романа Эрнесто Сабато «Туннель» в рамках латиноамериканского экзистенциализма. Эрнесто Сабато – аргентинский писатель, художник и физик. Эрнесто Сабато выиграл один из самых престижных премий в испаноязычной литературе и стал очень влиятельным в литературном мире по всей Латинской Америке. Творчество Сабато включает три романа: «Туннель» (1948), «О героях и могилах» (1961) и «Аваддон-губитель» (1974). «Туннель» психологический роман о художнике Хуан Пабло и его одержимости с женщиной. Название рассказа относится к символу для эмоционального и физического изоляции Кастеля от общества, которое становится все более очевидным, когда Кастель продолжает говорить от своей тюремной камеры в ряд событий, которые позволили ему убить единственного человека, способного понять его.

Ключевые слова: экзистенциализм, испаноязычная литература, престижная премия, творчество, психологический роман, одержимость, *символизировать*, эмоциональная и физическая изоляция

R. PETROSYAN – The Features of Ernesto Sabato's Novel “The Tunnel” within the Context of Latin American Existentialism. – The paper presents the features of Ernesto Sabato’s novel “The Tunnel” within the framework of Latin American Existentialism. Ernesto Sabato is an Argentine writer, painter and physicist. Ernesto Sabato won some of the most prestigious prizes in Hispanic literature and became very influential in the literary world throughout Latin America. Sabato’s oeuvre includes three novels: “The Tunnel” (1948), “On Heroes and Tombs” (1961) and “Abaddón the Exterminator” (1974). The “Tunel” is a psychological novel about a painter, Juan Pablo Castel, and his obsession with a woman. The story’s title refers to the symbol for Castel’s emotional and physical isolation from society, which becomes increasingly apparent as Castel proceeds to tell from his jail cell the series of events that enabled him to murder the only person capable of understanding him.

Key words: existentialism, hispanic literature, prestigious prize, oeuvre, psychological novel, obsession, symbolize, emotional and physical isolation

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
INFORMATION ON THE CONTRIBUTORS

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Մերի – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի դասախոս
ABRAHAMYAN Meri – YSU, Chair of French Philology, lecturer
Էլ. փոստ՝ m.abrahamyan@ysu.am
2. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զարուհի – բ.գ.թ., ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի ասիստենտ
AZIZBEKYAN Zaruhi – PhD, YSU, Chair of Romance Philology, Assistant Professor
Էլ. փոստ՝ zaruhiazizbekyan@ysu.am
3. ԱՅՎԱԶՅԱՆ Նելլի – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
AYVAZYAN Nelli – YSU, Chair of French Philology, PhD Student
Էլ. փոստ՝ nelly.ayvazyan5@mail.ru
4. ԲԱԶԻԿՅԱՆ Լորետա – ԵՊՀ անգլերենի ամբիոնի դասախոս, հայցորդ
BAZIKYAN Loreta – YSLU Chair of English language, lecturer, PhD student
Էլ. փոստ՝ loras2579@gmail.com
5. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հասմիկ – բ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ
BAGHDASARYAN Hasmik – PhD, YSU, Head of Chair of Romance Philology, Associate Professor
Էլ. փոստ՝ h.baghdasaryan@ysu.am
6. ԲԱՐՍԵԳՅԱՆ Լիանա – բ.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դոցենտ
BARSEGHYAN Liana – PhD, YSU, Chair of English Language № 2, Associate Professor
Էլ. փոստ՝ barseghyanliana@ysu.am
7. ԲՐՅԱՆ Արմինե – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
BRYAN Armine – YSU, Chair of Foreign Literature, PhD student
Էլ. փոստ՝ armine1989b@rambler.ru
8. ԳԱՍՊԱՐՅԱՆ Գրիշա – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի մագիստրանտ
GASPARYAN Grisha – YSU, Chair of English Philology, MA student
Էլ. փոստ՝ grisha.gasparyan@ysumail.am
9. ԳԱՍՊԱՐՅԱՆ Լուիզա – բ.գ.թ., ԳԱԱ գրականության տեսության բաժնի վարիչ
GASPARYAN Luiza – PhD, NAS, Head of the Literary Theory Department
Էլ. փոստ՝ luisa.gasparyan83@gmail.com
10. ԵՍԱՅԱՆ Մերի – Հայ-ռուսական համալսարան, Օտար լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի ավագ դասախոս, ՀՊՄՀ, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

- YESAYAN Meri – RAU, Department of Theory of Language and Cross-Cultural Communication, lecturer, ASPU, Chair of Foreign Language Teaching Methodology, PhD Student
 Էլ. փոստ՝ merush@yandex.ru
11. ԵՐԶՆԿՅԱՆ Ելենա – ք.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի վարիչ
 YERZNKYAN Yelena – Doctor in Philology, Professor, YSU, Head of Chair of English language № 2
 Էլ. փոստ՝ yerznkyan@ysu.am
12. ԽԻԶԱՆՏՅԱՆ Աննա – ԵՊՀ Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասպիրանտ
 KHIZANTSYAN ANNA – YSU, Chair of Russian Linguistics, Typology, and Theory of Communication, PhD student
 Էլ. փոստ՝ anna.khizantsyan@ysu.am
13. ՀԱԿՈԲՅԱՆ Նարե – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
 HAKOBYAN Nare – YSU, Chair of English Philology, PhD student
 Էլ. փոստ՝ narekaytser@gmail.com
14. ՀԱԿՈԲՅԱՆ Անահիտ – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ
 HAKOBYAN Anahit – YSU, Chair of Foreign Literature, PhD student
 Էլ. փոստ՝ anahit.hakobyan1988@yandex.ru
15. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Աշոտ – ք.գ.թ., ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
 HAYRAPETYAN Ashot – PhD, YSU, Chair of General Linguistics, Associate Professor
 Էլ. փոստ՝ ashot.hayrapetyan@ysu.am
16. ՀԱՐՄՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զավեն – մ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ
 HARUTYUNYAN Zaven – PhD, YSU, Head of Chair of French Philology, Associate Professor
 Էլ. փոստ՝ z.harutyunyan@ysu.am
17. ՄԱՆՈՒԿՅԱՆ Նարինե – ք.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի ասիստենտ
 MANUKYAN Narine – PhD, YSU, Chair of English Language № 2, Assistant Professor
 Էլ. փոստ՝ manukyannarine@ysu.am
18. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Ռոզա – ք.գ.թ., ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի դոցենտ
 MELIKSETYAN Roza – PhD, YSU, Chair of French Philology, Associate Professor
 Էլ. փոստ՝ rozameliksetian@ysu.am

19. ՉՈՒԲԱՐՅԱՆ Աստղիկ – բ.գ.թ., ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր
CHUBARYAN Astghik – PhD, YSU, Chair of English Philology, Professor
Էլ. փոստ՝ astghik.chubaryan@ysu.am
20. ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռուզաննա – բ.գ.թ., ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի սախտենտ
PETROSYAN Ruzanna – PhD, YSU, Chair of Diplomatic Service and Communication, Assistant Professor
Էլ. փոստ՝ ruzanna.petrosyan@ysu.am
21. ՍԱՀԱԿՅԱՆ Մելինե – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
SAHAKYAN Meline – YSU, Chair of Foreign Literature, PhD student
Էլ. փոստ՝ meline60@gmail.com
22. ՍԱՐԳՍՅԱՆ Լիլիթ – բ.գ.թ., ԵՊՀ անգլերենի № 2 ամբիոնի դոցենտ
SARGSYAN Lilit – PhD, YSU, Chair of English Language № 2, Associate Professor
Էլ. փոստ՝ sargsyan.lilit@ysu.am
23. ՄԻՐՈՒՆՅԱՆ Մարիամ – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ
SIRUNYAN Mariam – YSU, Chair of Foreign Literature, PhD Student
Էլ. փոստ՝ sirunyan2011@mail.ru
24. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Ամալյա – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
SOGHOMONYAN Amalya – YSU, Chair of Foreign Literature, PhD Student
Էլ. փոստ՝ amalya.soghomonyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ / Лингвистика / Linguistics

CHUBARYAN A., НАКОВЯН N. Phatic function in academic discourse.....	3
ՉՈՒԲԱՐՅԱՆ Ա., ՀԱՎՈԲՅԱՆ Ն. Խոսքարկման գործառույթը գիտական խոսքում	
ЧУБАРЯН А., АКОПЯН Н. Фатическая функция в академическом дискурсе	
YERZUNKYAN Y. On the metaphoric development of deictic verbs.....	13
ԵՐԶՆԿՅԱՆ Ե. Ցուցայնական բայերի փոխաբերական իմաստի զարգացման շուրջ	
ЕРЗИНКЯН Е. К вопросу о формировании метафорического значения в дейктических глаголах	
ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զ. Իսպանական հրաշապատում հեքիաթներում համեմատությունների փոխակերպման որոշ սկզբունքների շուրջ.....	21
АЗИЗБЕКЯН З. О некоторых принципах трансформаций сравнений в испанских волшебных сказках	
AZIZBEKYAN Z. On some principles of simile transformations in Spanish tales of magic	
ԲԱԶԻԿՅԱՆ Լ. Անդրադարձ կառույցները անգլերենում և հայերենում (կառուցվածքային և իմաստային վերլուծություն).....	33
БАЗИКЯН Л. Возвратные конструкции в английском и армянском языках (структурно-семантический анализ)	
BAZIKYAN L. Reflexive constructions in English and Armenian (structural-semantic analysis)	
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հ. Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամասնությունը փոխաբերության թարգմանության խնդրում.....	48
БАГДАСАРЯН А. Диалектическое единство универсального, национального и индивидуального в переводе метафоры	
BAGHDASARYAN H. On the dialectical unity of the universal, the national and the individual in the translation of the metaphor	
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ա. Փոխառությունները որպես լեզվի հաղորդակցման գործառույթի անընդհատության դրսևորում.....	58
АЙРАПЕТЯН А. Заимствования как проявление непрерывности коммуникативной функции языка	
HAYRAPETYAN A. Borrowings: continuity in communicative function of language	
ՀԱՐԱԿՅԱՆ Զ., ԱԲՐԱՄՅԱՆ Մ. Դարձվածային միավորների լեզվա-վշակութային արժեքը.....	72
АРУТЮНЯН З., АБРАМЯН М. Лингвокультурологическая ценность фразеологических единиц	
HARUTYUNYAN Z., ABRAHAMYAN M. Linguocultural value of phraseological units	

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Զ., ԱՅՎԱԶՅԱՆ Ն. Հույզերի ուսումնասիրության լեզվա- բանական հայեցակարգը.....	81
АРУТЮНЯН З., АЙВАЗЯН Н. Изучение эмоций в лингвистическом аспекте HARUTUNIAN Z., AYVAZYAN N. Emotions from linguistic perspective	
ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ Ռ. Անհամաձայնության լեզվական դրսևորումները ժամանա- կակից ֆրանսերենում.....	90
МЕЛИКСЕТЯН Р. Языковые проявления несогласия во французском языке MELIKSETYAN R. Linguistic expression of disagreement in French	
ՏԱՐԳՏՅԱՆ Լ. Глубина слова в морфемах как один из признаков лексичности/ грамматичности языка.....	100
ՍԱՐԳՍՅԱՆ Լ. Բառի ձևային խորությունը որպես լեզվի բառային/ քերականական արտահայտվածության արտացոլում SARGSYAN L. On the morpheme depth of word as an indicator of language lexicality/grammaticality	
ՔԻԶԱՆՇՅԱՆ Ա. Варианты флексий родительного падежа единственного числа -а и -у в словах мужского рода (на материале сочинений И.Т. Посошкова).....	108
ԽԻԶԱՆՇՅԱՆ Ա. Արական սեռի բառերի -а և -у վերջավորությունների տարբերակումը սեռական հոլովում (Ի. Տ. Պոսոշկովի աշխատությունների նյութի հիման վրա) KHIZANTSYAN A. The variable use of the inflections of the genitive case of the singular -a and -y in the masculine words (on the material of the essays of I. T. Pososhkov)	

ՄԵԹՈԴԻԿԱ / Методика / Methodology

BARSEGHYAN L. Promoting student learning through “Time for Tea” project.....	115
ԲԱՐՍԵԴՅԱՆ Լ. Սովորողների ուսման գործընթացի խթանումը «Time for Tea» ծրագրի միջոցով БАРСЕГЯН Л. О роли проекта «Time for Tea» в повышении мотивации студентов	
ԳԱՍՊԱՐՅԱՆ Գ. Փոխանակման ծրագրերի դերը ուսանողների կյանքում.....	123
ГАСПАРЯН Г. О роли программ обмена в жизни студентов GASPARYAN G. The role of exchange programs in students' life	
ԵՍԱՅԱՆ Մ. Անգլերեն գիտական տեքստերի ընտրության և ուսուցման լեզվա- նձական հայեցակերպը.....	130
ЕСАЯН М. Лингвостилистический аспект отбора и обучения английским научным текстам YESAYAN M. Linguo-stylistic aspect of selecting and teaching English scientific texts	
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ն. Քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը անգլերե- նի արագացված դասընթացներում.....	139
МАНУКЯН Н. Использование грамматико-переводного метода в ускорен- ных курсах английского языка MANUKYAN N. The use of grammar-translation method in accelerated English courses	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / Литературоведение / Literary Criticism

ԲՐՅԱՆ Ա. Ա. Մապլուոյի ինքնաբերական տեսությունը որպէս պոետական տեսիլքի արտահայտչամիջոց Թեդ Հյուզի և Թոմաս Թրանսթրոմերի պոետիկայում.....	147
БРЯН А. Теория потребностей Абраама Маслоу как проявление поэтического видения в поэзии Т. Хьюза и Т. Транстромера BRYAN A. Abraham Maslow's theory of needs as the means of expression of poetical vision in T. Hughes and T. Transtromer's poetry	
ԳԱՍՊԱՐՅԱՆ Գ. Մարդու մտքի ճանապարհորդությունը Ջեք Լոնդոնի «Չապաշապիկը» վեպում.....	156
ГАСПАРЯН Г. Путешествие человеческого разума в «Смирительной рубашке» Джека Лондона GASPARYAN G. The journey of the human mind in "The Jacket" by Jack London	
ԳԱՍՊԱՐՅԱՆ Լ. Ժամանակակից ֆենթերի Ջ. Ռոուլինգի «Հարրի Փոթեր» ստեղծագործության լույսի ներքո.....	163
ГАСПАРЯН Л. Жанр фэнтези в свете работы Дж. Роулинга «Гарри Потер» GASPARYAN L. Modern fantasy through the light of J. Rowling's "Harry Potter"	
ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մթիվենսոնի ֆանտաստիկ աշխարհը.....	171
АКОПЯН А. Фантастический мир Стивенсона НАКОВЯН А. Stevenson's fantastic world	
ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Ռ. Լ. Մթիվենսոնը և վիկտորյան դարաշրջանի պատմամշակութային հակասությունները.....	180
АКОПЯН А. Р. Л. Стивенсон и культурно-исторические противоречия викторианской эпохи НАКОВЯН А. R. L. Stevenson and the cultural and historical contradictions of the Victorian era	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Գարրիել Գարսիա Մարկեսի «Հուշագրություն իմ տխուր պոռնիկների մասին» վիպակի կառուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները	188
ПЕТРОСЯН Р. Принципы и особенности построения повести Габриэля Гарсиа Маркеса «Вспоминая моих грустных шлюх» PETROSYAN R. The principal features of the construction of Gabriel García Márquez's novel "Memories of my melancholy whores"	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Էռնեստո Սաբատոյի «Թունելը» վեպի առանձնահատկությունները լատինամերիկյան էքզիստենցիալիզմի շրջանակներում.....	197
ПЕТРОСЯН Р. Особенности романа Эрнесто Сабато «Туннель» в контексте латиноамериканского экзистенциализма PETROSYAN R. The features of Ernesto Sabato's novel "The Tunnel" within the framework of Latin American existentialism	

ՍԱՀԱԿՅԱՆ Մ. Անցումը ստատիկ քաոսից դինամիկ քաոսին (մայաների աշխարհաստեղծման միջի հիման վրա).....	206
СААКЯН М. Переход из статистического хаоса в динамический на основе мифа майя о сотворении мира	
ՏԱՈՒԿՅԱՆ Մ. «Կորուսյալ սերնդի» ու նոր սերնդի բախումը. նոր հերոսի պրոբլեմը Օլդինգտոնի «Մերժված հյուրը» և «Իրական դրախտ» վեպերում..	215
СИРУНЯН М. Столкновение (конфликт) «потерянного» и «нового» поколения, проблема нового героя в романах Олдингтона «Отверженный гость» и «Сущий рай»	
SIRUNYAN M. The clash of “Lost Generation” and the “New Generation”: the problem of new hero in the novels “Rejected guest” and “Very heaven” by Aldington	
ՍՈՂՈՍՈՆՅԱՆ Ա. Գերմարդու կոնցեպտը Ջեք Լոնդոնի «Ծովագայլը» վեպում...	224
СОГОМОНЯН А. Концепция сверхчеловека в романе «Морской волк» Дж. Лондона	
SOGHOMONYAN A. The concept of superman in Jack London’s novel “The Sea-Wolf”.	
Տեղեկություններ հեղինակների մասին	233
Information on the contributors	

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով, մեկ տպագիր օրինակով համակարգչային շարվածքով (Microsoft Word 97-2003 ծրագրով, հայերենը՝ GHEA Grapalat (Unicode), անգլերենը և ռուսերենը՝ Times New Roman տառատեսակներով): Հոդվածի հետ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի էլեկտրոնային տարբերակը մագնիսական կրիչով: Հոդվածը պետք է ունենա հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ 60-70 բառի սահմաններում, 8-10 բանալի բառեր, հեղինակի մասին համառոտ տեղեկություն 3 լեզուներով (գիտական աստիճան, կոչում, պաշտոն, էլ. փոստի հասցե, հեռախոսահամար):

Հոդվածի առաջին էջի վերին տողի աջ անկյունում 12 pt տառաչափով, թավ (Bold) գրվում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը (ազգանունը՝ գլխատառերով, օրինակ՝ **Արմինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**), շեղատառ (Italic) բուհի կամ գիտահետազոտական կենտրոնի անվանումը, գլխատառերով, թավ (Bold) հոդվածի վերնագիրը:

Հոդվածում օգտագործված գրականության հղումները տրվում են փակագծերում, նշվում են հեղինակի ազգանունը, տպագրման տարեթիվը և համապատասխան էջերը, օրինակ՝ /Payne, 2000: 168-170/: Գրականության ցանկը տրվում է հոդվածի վերջում՝ այբբենական կարգով:

Հեղինակը պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար: Հրապարակվող նյութերի բնագրերը չեն վերադարձվում: Հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն տվյալ ոլորտի մասնագետի կողմից և երաշխավորված լինեն տպագրության համապատասխան ամբիոնի կողմից. բոլոր կարծիքները, երաշխավորագրերը պահպանվում են խմբագրությունում:

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղում:

Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրների նմուշ

1. Աբրահամյան Ս. Գ. Հայերենի կետադրություն, Երևան, «Լույս», 1999:
2. Austin J. L. How to do things with words. Oxford: Oxford University Press, 1962.
3. Langacker R.W. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 1. Stanford: Stanford University Press, 1987.
4. Гинзбург Р. С. О взаимосвязи лингвистического и экстралингвистического в лексике // *Иностранные языки в школе*, 1972, № 5.
5. Иванов В. И. Язык, текст, речь // Электр. ресурсы: <http://www.textum.ru /article/ivan/html>
6. Brin D. Contrary Brin, 2011 // URL: <http://davidbrin.wordpress.com/2011/04/08/> (Retrieved July 8, 2015)

Խմբագրության հասցեն. Երևան 0025, Ալ. Մանուկյան 1
Адрес редакции: Ереван, ул. Ал. Манукяна 1
Էլ. փոստ՝ englishdep2@ysu.am

Հանձնվել է տպագրության 12.11.2018թ.
Թուղթը՝ օֆսետը՝ Չափսը՝ 84x100/16
Տպագրական 18 մամուլ:
Տպաքանակը՝ 100: